

ՀԱՅԳԻՏՈՒԹՅԱՆ
ԵՒ
ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ
ԻՆՍՏԻՏՈՒՏԻ
ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ
7

VII


ԳՐԱԽՈՍԱԿԱՆ

Études arméniennes contemporaines, 2023, № 15: La presse de langue arméniennes en France et la création d'un espace transnational / The Armenian-Language Press in France and the Creation of a Transnational Space (sous la direction de Talar Chahinian et Stéphanie Prévost), Bibliothèque Nubar de l'UGAB, Paris, 272 p.

Փարիզի Նուբարյան գրադարանի կողմից 2013-ից ի վեր հրատարակվող «Արդի հայագիտություն» հանդեսի 2023 թ.՝ թեմատիկ ընդհանրությամբ միախմբված համարը (№ 15) ներառում է տարբեր հեղինակների գիտական հոդվածներ, ակնարկներ, հաղորդումներ և հարցազրույցներ, որոնք քննում են Ֆրանսիայի հայկական մամուլի միջոցով ձևավորվող լեզվական, մշակութային և քաղաքական փոխազդեցությունները, ինչը կարևոր ներդրում է սփյուռքահայ մամուլի պատմության, Սփյուռքի ինքնության ձևավորման և լեզվի պահպանության խնդիրների ուսումնասիրության մեջ: Հոդվածագիրները հետազոտական տարբեր դիտանկյուններով են վերլուծում ֆրանսահայ հայալեզու պարբերականների պատմական ուղին, Սփյուռքի կայացման և պահպանման գործընթացում նրանց ունեցած ազդեցությունն ու նշանակությունը: Հատորում ընդգրկված՝ ֆրանսերեն, անգլերեն և հայերեն գրված հրապարակումների մեծ մասը որպես զեկուցում նախապես ներկայացվել է 2019 թ. նոյեմբերի 7-ին Փարիզի Արևելյան լեզուների և քաղաքակրթությունների ազգային ինստիտուտում (INALCO) տեղի ունեցած նույնանուն՝ «Ֆրանսիայի հայալեզու մամուլը և անդրազգային տարածույթի ստեղծումը» միջազգային աշխատաժողովում, որի կազմակերպիչը Փարիզի Նուբարյան գրադարանն էր (տնօրեն՝ Բորիս Աճեմյան), Գալուստ Գյուլբենկյան հիմնարկության օժանդակությամբ:

Հատորը բաղկացած է հետևյալ 7 բաժիններից՝ Ներածություն, Ուսումնասիրություններ, Հարցազրույց, Ակնարկներ, Զանազանք, Գրախոսություններ, Ամփոփագրեր: Վերջին բաժնում ընդգրկված են անգլերեն և ֆրանսերեն համառոտ ամփոփումներ յուրաքանչյուր նյութի վերաբերյալ՝ բացառությամբ գրախոսականների: Ներածական մասն իրենից ներկայացնում է հատորի խմբագիրներ Դավար Շահինյանի (Կալիֆոռնիայի համալսարան, Իրվին - UCI) և Ստեֆանի Պրևոստի (Փարիզի Սիտե համալսարան / Ֆրանսիայի համալսարանական ինստիտուտ) համատեղ ներածական հոդվածը, որով բացվում է EAC սույն համարը: Այս ներածություն-հոդվածը ներկայացված է երկու լեզվով՝ անգլերեն և ֆրանսերեն:

Զույգ խմբագիր-հեղինակները «Անդրազգային ինքնությունները՝ տպագիր. Ֆրանսիայի հայալեզու մամուլը համաշխարհային հեռանկարում» ներածական հոդվածում ֆրանսահայ մամուլը ներկայացնում են իբրև համազգային նշանակություն ունեցող երևույթ: Հոդվածագիրները մատնանշում են 1855-ից Ֆրանսիայում հրապարակված ավելի քան 200 հայերեն պարբերականներ՝ առանձնացնելով հատկապես «Յառաջ» թերթը (1925–2009), որն, ըստ հոդվածի հեղինակների, տևական և ազդեցիկ տպագիր հարթակ է ծառայել Սփյուռքում համազգային ինքնության ձևավորման գործում: Ներկայացվում է ֆրանսահայ



մամուլի կենսունակ պատմությունը՝ Հայոց Ցեղասպանությունից առաջ և հետո, սկսած «Արևելք», «Արմենիա» և «Անահիտ» պարբերականներից մինչև «Յառաջ» օրաթերթն ու «Նոր Յառաջ»-ը, որոնք, ըստ հոդվածագիրների, միասնական հարթակ են ստեղծում՝ արտացոլելու համար ֆրանսահայ համայնքի մշակույթը, հանրային խնդիրներն ու մտահոգությունները, գրական հետաքրքրություններն ու քաղաքական բանավեճերը՝ հետևելով նաև համայնքի և ընդունող պետության երկխոսությանը: Իր երկարամյա պատմության ընթացքում Ֆրանսիայի հայալեզու մամուլը խթանել է նաև Ֆրանսիայի և ողջ «հայ աշխարհի» երկխոսությունը: Հատկանշական է, որ Ֆաթիհ Աքրնի «Սալի» (2014) ֆիլմի քննությամբ հոդվածագիրները ներկայացնում են Ցեղասպանություն վերապրածների կյանքում՝ հատկապես կորած հարազատներին վերագտնելու և Սփյուռքի ձևավորման մեջ հայալեզու մամուլի կարևորությունը, քանզի պատմական հենց այդ ծանր շրջափուլն է եղել հայալեզու մամուլի կայացման մեկնակետն ու աշխարհասփյուռ հայերի կապող օղակը:

«Ուսումնասիրություններ» բաժնում ընդգրկված է 4 հոդված: Ամերիկահայ-պոլսահայ պատմաբան Լեոնա Էքմեքչիօղլուի (Մասաչուսեթսի տեխնոլոգիական ինստիտուտ, Բոստոն - MIT)՝ Ֆրանսահայ կանանց միության (FAWU) գործունեությանն անդրադարձող **«Կոմունիստ հայ կանանց պատմությունը. Հայ կինը ետպատերազմյան Ֆրանսիայում և ֆեմինիստական հայրենադարձությունը դեպի Խորհրդային Հայաստան (1947-1949)»** անգլերեն հոդվածը ներկայացնում է Երկրորդ Աշխարհամարտի ժամանակ և դրան հաջորդած տարիներին Ֆրանսիայում ձևավորված խորհրդամետ, հակաֆաշիստական և ֆեմինիստական հայ կանանց շարժման մանրակրկիտ պատմական և գաղափարախոսական վերլուծությունը: Հատուկ շեշտվում է, որ հայրենադարձության քարոզչությունը «Հայ կինը» հանդեսում ուներ ընդգծված գենդերային ուղղվածություն՝ կանանց ներկայացնելով որպես հայ ինքնության պահպանման հիմնական երաշխավորներ, որոնց առաքելությունն էր՝ ընտանիքը մղել Հայրենիք վերադառնալու որոշմանը: Հոդվածը համակողմանիորեն նկարագրում է նաև կազմակերպության հանրային հիմքը՝ ընդգծելով, որ ՖԿՄ-ն իր անդամակազմով հիմնականում բաղկացած էր բանվոր դասի կանանցից, որոնք Ֆրանսիա էին ներգաղթել Հայոց Ցեղասպանությունից հետո, և նրանց հիմնական աշխատանքը՝ ձեռագործությունն ու տեքստիլ ոլորտն էր: Հոդվածը ցույց է տալիս նաև կազմակերպության ներսում առկա սոցիալական ու սերնդային բազմազանությունը: Ըստ փաստական հիմքերի՝ կարելի է ասել, որ «Հայ կին»-ը սփյուռքահայ կանանց յուրահատուկ հարթակ էր, միաժամանակ՝ կարևոր աղբյուր ետպատերազմյան կոմունիստական և ֆեմինիստական հայ ինքնության ուսումնասիրման համար:

Լիոնի Բարձրագույն նորմալ դպրոցի (ENS) ասպիրանտ Սոֆի-Ջոէ Թուլայանի ֆրանսերեն հոդվածը՝ **«Հայ Պայքար. հայ բողոքավոր պարբերականը 1968-ի մայիսի հետքերով»**, նվիրված է 1970-ականների վերջին Ֆրանսիայում հրատարակվող «Հայ պայքար» պարբերականին, որի դիախրոնիկ (տարածամանակյա) ընթերցումը թույլ է տալիս հոդվածագրին՝ դիտարկել այն իբրև հայոց ազատագրական շարժման պարբերականացում:

Ժանին Պետրոյանի (Փարիզ) **«Շավարշ Նարդունի և Հայ բուժ. Փարիզի հայոց բժշկական հանդես (1934-1967)»** ֆրանսերեն հոդվածը նվիրված է Շավարշ Այվազյանի (Շավարշ Նարդունու) հիմնադրած «Հայ բուժ» պարբերականին, որը ներկայացվում է որպես 1934-1967 թթ. սփյուռքահայ իրականության արտացոլում: Հոդվածագիրն ընդգծում է, որ հանդեսը ստեղծվել էր ոչ թե որպես զուտ առողջապահական տեղեկատվություն տարածող պարբերական, այլ ավելի լայն՝ որպես գիտելիքների տարածման, համայնքի կազմակերպման, հիշողության պահպանման և լեզվամշակութային ինքնության ձևավորման գործիք: Հեղինակը, մասնավորապես, կարևորում է Նարդունու դերը որպես խմբագիր և գաղափարական առաջնորդ, ով կարևոր ներդրում ունի Սփյուռքում առողջապահական մշակույթ ձևավորելու գործում: Այսպիսով, «Հայ Բուժ»-ը դիտարկվում է թե՛ որպես առողջապահական

խորհրդատվություն ապահովող պարբերական, թե՛ համայնքի ինքնակազմակերպման հարթակ:

Պատմաբան Վահե Թաշճյանը («Հուշամատյան», Բեռլին) «**ՀՕԿ հանդեսը Հայաստանում և Սփյուռքում նոր սոցիալիստական դարաշրջանի համար**» ֆրանսերեն հոդվածով բացահայտում է պարբերականի պատմական ֆենոմեն լինելու հանգամանքը՝ մարքսիստական քարոզչությունը զուգակցելով լեզվամշակութային պայքարին: Անմիջականորեն կապված լինելով ՀԽՍՀ իշխանությունների հետ՝ հանդեսը Սփյուռքում տարածում էր նրանց գաղափարախոսությունը: Ուսումնասիրությունն առանձնանում է թե՛ լեզվաբանական խնդրամբ, թե՛ պատմագիտական մեկնաբանությամբ:

Ֆրանսահայ անվանի գրող Գրիգոր Պըլտյանը՝ ֆրանսերեն լեզվով «**Լեզվական հնարամտություն և նորաբանություններ. սփյուռքահայ մամուլն իբրև դիմադրության հարթակ**» հարցազրույցում (վարդներ՝ Դալար Շահինյան, Ստեֆանի Պրևոստ, Բորիս Աճեմյան) վերլուծում է հայ մամուլի լեզվական շերտերը՝ նորաբանությունների ու գրական լեզվի հարստացման տեսանկյունից՝ շեշտելով սփյուռքահայ մամուլի ոչ միայն լրատվական, այլև լեզվի և մշակույթի պահպանության գործառույթները՝ դիտարկելով այն իբրև սփյուռքահայերի ինքնության և ետ-ցեղասպանական մշակույթի պահպանության տիրույթ:

Լեզվաբան և բանագետ Տորք Դալայանը (ՀՀ ԳԱԱ ՀԱԻ / ԼԻ) «**Արևմտահայերենի կանոնարկման և զարգացման հարցերը «Յառաջ»-ի էջերում մեջ**» ակնարկում, որ ներկայացված է արևմտահայերեն և ֆրանսերեն տարբերակներով (ֆրանսերեն թարգմանությունը՝ Բորիս Աճեմյան), դիտարկում է Արևմտյան Երոպայի ամենաինչև հայալեզու տալագիր օրաթերթի՝ «Յառաջ»-ի դերը մայրենիի կանոնակարգման և զարգացման, ինչպես նաև հայապահպանության գործում: Հոդվածի հետազոտական հայացքն ուղղված է «Յառաջ»-ի «երկու գաղափարախոսական հսկաների»՝ Շավարշ Միսաքյանի և Շավարշ Նարդունու գործունեությանը: 1915-ի Ցեղասպանությունից հետո երոպահայության կենտրոն դարձած Ֆրանսիայում հայ մամուլը տարիներ ի վեր առաջատար դեր է խաղացել Երոպայում բնակություն հաստատած հայերի համար, որոնք ավանդաբար՝ իբրև պաշտոնական լեզու են ընդունել արևմտահայերենը, ուստի «Յառաջ»-ը տասնամյակներ շարունակ եղել է արևմտահայերենի և արևմտահայ ինքնության պահպանման խորհրդանիշ: Անդրադառնալով Ցեղասպանությունից հետո Ֆրանսիայում ձևավորված խոշոր հայ համայնքի և Ֆրանսիայի մերձավորարևելյան քաղաքականությանն ու Արևելքի քրիստոնյաների պաշտպանի ու հովանավորի դիրքորոշմանը՝ հոդվածագիրը փաստում է ֆրանսահայերի հիմնած հաստատությունների և, մասնավորապես, մամուլի առաջատար դիրքը ողջ Երոպայում: Այդ պարբերականների շարքում Տ. Դալայանն առանձնացնում է «Յառաջ»-ի գրեթե մեկդարյա գործունեությունը, որի շնորհիվ օրաթերթը դարձել է արևմտահայերեն գրական տարբերակի պահպանման և զարգացման, ինչպես նաև սփյուռքահայ ինքնության խորհրդանիշ:

Լիոն-2 համալսարանի ասպիրանտ Ռոման Լազադիկի ֆրանսերեն հրապարակումը՝ «**Ֆրանսիայում ապրիլի 24-ի արարողությունը. հայոց ոգեկոչման ծեսը՝ ինքնության կրոնական արտահայտության և հանրապետական խորհրդաբանության միջև**», նվիրված է Ֆրանսիայի հայաշատ քաղաքներում՝ Փարիզ, Լիոն, Մարսել և Վալանս, Հայոց Ցեղասպանության ոգեկոչման նկարագրությանը: Ըստ հեղինակի՝ ոգեկոչման միջոցառումները արմատավորված գործընթացի, ավանդույթի են վերածվել, որոնք կրոնական ծեսը հարմարեցնում են աշխարհիկ արժեքներին: Կրոնական ծեսի աշխարհիկացումը մասամբ ծառայում է կրոնական ավանդույթի պահպանմանը. համադրվելով Ցեղասպանության գոհերի ոգեկոչման հետ՝ այն վերածվում է հայ համայնքի ինքնության նոր առանցքի:

«**Գրախոսություններ**» բաժնում ընդգրկված են անգլերեն գրված 4 հրապարակումներ, որոնք անդրադառնում են 2019-2021 թթ. լույս տեսած գրքերի:

Վահագն Ավետյանի (Ուփսալա) գրախոսությունը Յոախիմ Սավելսբերգի «**Իմանալ**

Ցեղասպանության մասին. հայերի տառապանքը և իմացաբանական պայքարը» անգլերեն աշխատության (Կալիֆորնիայի համալսարան, 2021, 264 էջ) վերաբերյալ մեկնաբանում է Սավելսբերգի կիրառած գիտելիքի սոցիոլոգիայի մեթոդաբանական շրջանակը՝ ընդգծելով «գիտելիքաբանական շղթայի», «միջնորդավորված հիշողության» և «իմացաբանական պայքարի» հասկացությունների գործնական կիրառումը՝ կապված Հայոց Ցեղասպանության պատմության և ընկալման հետ:

Քելլի Հաննալին (Միչիգանի համալսարան) վերլուծում է Նազան Մաքսուդյանի **«Օսմանյան երեխաներն ու երիտասարդությունը Առաջին Աշխարհամարտի տարիներին»** անգլերեն մենագրությունը (Սիրակուզայի համալսարան, 2019, XV+210 էջ)՝ արժևորելով այն որպես կարևոր պատմական շեշտադրվածություն ունեցող աշխատանք, որ վերլուծատարածում է պատերազմի և ցեղասպանության պատմագրությունը՝ երեխաների ու երիտասարդների տեսանկյունից:

Վարազ Գեթսեմանյանի (Բեյրութի ամերիկյան համալսարան) գրախոսությունը Ռիչարդ Անթառամյանի **«Հավատքի միջնորդներ, կայսրության միջնորդներ. հայերը և բարեփոխումների քաղաքականությունը Օսմանյան կայսրությունում»** անգլերեն մենագրության (Սթենֆորդի համալսարան, 2020, 220 էջ) վերաբերյալ ամփոփում է ոչ միայն գրքի հիմնական թեզերը, այլև կառուցողական մեկնաբանությամբ և հարցադրումների ձևակերպմամբ նշում թե՛ աշխատության արժանիքները, թե՛ որոշ բացթողումներ: Հեղինակը մանրամասնորեն նկարագրում է Ռ. Անթառամյանի տեսական մոտեցումները՝ կապված «հորիզոնական» իշխանական հարաբերությունների ու ցանցայնացված կառավարման մոդելների հետ:

Այա Դարբինյանի (Բրուքլեյլի համայնքային քոլեջ, ԱՄՆ) գրախոսությունը Ստեփան Բադալյան Ռիգի **«Ռուսաստանի խճճված գրկախառնումը. ցարական կայսրությունը և հայերը»** աշխատության (Քոբնեյի համալսարան, 2020, 328 էջ) վերաբերյալ ներկայացնում է դրա կառուցվածքային, բովանդակային և մեթոդաբանական առանձնահատուկությունները: Ըստ գրախոսի՝ աշխատությունը ցույց է տալիս ռուս-հայկական հարաբերությունների բարդությունը 19-րդ դ. և 20-րդ դարասկզբին՝ ուսումնասիրելով ցարական *իմպերիալիզմի* ռազմավարությունները:

Այսպիսով, կարելի է միանգամայն հաջողված համարել թեմատիկ որոշակի ընդգրկմամբ կազմված՝ «Արդի հայագիտություն» հանդեսի հերթական համարը (գլխավոր խմբագիրներ՝ Բորիս Աճեմյան, Վազգեն Դավիթյան, տնօրեն՝ Ռեյմոն-Հարություն Գևորգյան): Այն ներկայացնում է Սփյուռքի, մասնավորապես՝ Ֆրանսահայ համայնքի մշակութային, լեզվական և քաղաքական կյանքին առնչվող հարցերի համակողմանի և բազմաշերտ քննություն՝ հայալեզու մամուլի զարգացման, ինքնության ձևավորման ու պահպանման, ինչպես և պատմական հիշողության բյուրեղացման համատեքստում: Համարը կարևոր ներդրում է սփյուռքագիտության, հայ մամուլի պատմության, ցեղասպանագիտության, լեզվական ինքնության պահպանման ոլորտներում:

Տորք Դալայյան, ք.գ.թ.

Լուսինե Հայրիյան, ք.գ.թ.

Անահիտ Խեչոյան

ՀԱԻ